

«Հոգեբանությունը և կյանքը» հանդեսն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի գիտական հանդեսների ցուցակում՝ համաձայն ՀՀ ԲՈՀ-ի խորհրդի 17.12.2001 թ.-ի նիստի որոշման (արձ. N25) դրվագրական և թեկնածուական առեճախսությունների համար

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

ПСИХОЛОГИЯ И ЖИЗНЬ
PSYCHOLOGY AND LIFE

3-4
2004



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՆ ԱՐՈՒՋՈՒՄՅՅԱՆ, ԴԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ <i>ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ</i> <i>ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</i>	3
ԱՐԱՄ ԳՅՈՒՐՋՅԱՆ <i>ՀԵՌՈՒՄՏԱԼՍԱՐԱՆԻ ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ</i> <i>ՆԱԽԱՊԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</i>	9
ВАГЕ АКОПЯН <i>“ИНТЕРНЕТ – ЗАВИСИМОСТЬ” КАК ПСИХОЛОГИЧЕСКОЕ ЯВЛЕНИЕ</i>	14
ԱՌԱՔԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ <i>ՊՐՈՔԼԵՄԱՅԻՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ</i> <i>ՆԵՐՀՈԳԵԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ</i>	20
ՎԱՀԱՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ <i>ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԿՈՒՆՏՐՈՒՐԱՆ ԵՎ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ</i> <i>ՄԱՐԴՈՒ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ</i>	26
АСЯ ПОГОСЯН <i>ФОРМИРОВАНИЕ ЭКОЛОГИЧЕСКОГО СОЗНАНИЯ УЧАЩИХСЯ</i>	30
АНАИТ САРКИСЯН <i>ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ОБЩЕНИЯ В ИНТЕРНЕТЕ</i>	34

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԼԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ, ԱՐՄԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ <i>ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆԻ ԵՎ ԻՆՏՈՒԻՑԻԱՅԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ</i> <i>ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ</i>	39
ՌՈՒԲԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ <i>ՈՒՍՈՒՑՉԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԱՆՁՆԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</i> <i>ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ</i> <i>ՈՐՊԵՍ ՆՐԱ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ</i>	50

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՌՈՒԲԵՆ ԱՂՈՒԶՈՒՄՑՅԱՆ
ԴԱԿԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ԿՐԵԱՏԻՎՈՒԹՅՈՒՆ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրեատիվության ոլորտը հետազոտման բավական բարդ դաշտ է և առաջ է բերում բազում վեճեր, այն քննարկվում է տարբեր հայեցակարգերում և հանդես է գալիս գլուխկոտրուկի մասերի ձևով, որոնք ի մի բերել դեռ ոչ ոք չի կարողացել:

Դեռ 60-ականներին արդեն գոյություն են ունեցել կրեատիվության ավելի քան 60 բնութագրումներ, և դրանց թիվը օրեցօր աճում է: Ինչպես նշում են հետազոտողները, կրեատիվության հասկացման գործընթացը ինքնին կրեատիվ մտեցում է պահանջում:

Դեռ վաղուց եղվարդ դե Բոնոն իր «Նոր մտքի ծնունդը» մենագրության մեջ առանձնացրել էր ուղղաձիգ (շաբլոն) և լատերալ (ոչ շաբլոն) մտածողությունները՝ մանրակրկիտ քննարկելով դրանցից յուրաքանչյուրը: Նրա աշխատության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ հիմնարար երեք դրույթները.

1. Որպես նոր մտքեր ստանալու եղանակ շաբլոն մտածողությունը սահմանափակ է:


2. Նոր մտքեր ստանալու համար անհրաժեշտ է օգտագործել ոչ շաբլոն (լատերալ) գործընթացներ:

3. Ոչ շաբլոն մտածողության նպատակն է ստանալ նոր մտքեր, որոնք պետք է լինեն ավելի պարզ, խորին և արդյունավետ(1):

Համաձայն Մեդնիկի կրեատիվության կոնցեպցիայի՝ ստեղծագործականության ընդունակությունը որոշվում է մտածողական համադրման (սինթեզի) վերջնական փուլում՝ ստերեոտիպների հաղթահարման ընդունակությամբ և զուգորդական դաշտի

լայնությամբ: Նոր իմաստային գուգորդումների ստեղծումը կրեատիվ մտածողական գործընթաց է (3) (տես՝ սխեմա 1):

Խնդրի բաղադրատարրեր



Լայն ասոցիատիվ դաշտի, ինչպես նաև լատերալ մտածողության օգտագործումը սուբյեկտին տալիս է լուծման բազմաթիվ տարբերակներ:

Գիտնականների մի խումբ ինտելեկտուալ կառույցների մեջ տարբեր ձևերով ներառված է դիտում ստեղծագործական ընդունակությունները, մեկ այլ խումբ կրեատիվությունը դիտում է որպես առանձին պարամետր, որը, սակայն, ինչ-ինչ հարաբերությունների մեջ է գտնվում ինտելեկտի հետ (3, 6):

Գոյություն ունեն ինտելեկտի և կրեատիվության մեկնաբանության երեք խումբ տեսություններ.


1. Որպես այդպիսին ստեղծագործական ընդունակություններ չկան: Կրեատիվ վարքի պատճառներ են հանդիսանում որդապատճառները, արժեքները, անձնային որակները (Մասլոու, Օլոխ Բոգոյավլենսկայա):

2. Ինտելեկտը և կրեատիվությունը ուղիղ համեմատական են (Վեկսլեր, Այգենկ, Շտերնբերգ):

3. Կրեատիվությունը ինտելեկտից անկախ գործոն է (Գիլֆորդ, Թեյլոր, Պոնոմորյով, Տորրենս) (5):

Վերջին մոտեցումն անվանվել է սահմանային տեսություն և բացատրում է այն պարադոքսը, որի համաձայն՝ կրեատիվու-

թյունը և ինտելեկտուալ ընդունակությունները երկու տարբեր, բայց բարդ կերպով փոխկապակցված երևույթներ են: Ցածր ինտելեկտուալ զարգացման դեպքում կրեատիվությունը անհնար է, սակայն ինտելեկտուալ որոշ մակարդակում կրեատիվությունը դառնում է անկախ փոփոխական (տես գրաֆիկ 1):



Առաջինը Ուոլլեսն էր, որը բաժանեց ստեղծագործական գործընթացը 4 փուլերի՝ *ճախապատրաստում, ինկուբացիա, արտահայտում, ճշմարտացիության ստուգում*: Սա ոչ միայն պատահական բաժանում է, այլ շրջադարձային պահ կրեատիվության տեսության զարգացման համար: Ուոլլեսը սրանով մշեց և ցույց տվեց, որ ստեղծագործական լուծումները ոչ թե պատահաբար կան ինչ-որ անորոշ ուժի կողմից են թելադրվում. այլ ունեն իրենց զարգացման սկզբունքներն ու օրրնաչափությունները: Բախվելով խնդրալին իրավիճակի հետ և հստակ ձևակերպելով խնդիրը՝ անհրաժեշտություն ենք գգում խնդրին վերաբերող ինֆորմացիայի և զբաղվում ենք դրա հավաքագրմամբ, վերջինս ծառայում է որպես անհրաժեշտ ինֆորմացիոն ֆոն լուծում պահանջող աշխատանքի համար (I փուլ). վերանշակում ենք տվյալ ինֆորմացիան. արտաքննապես այն թվում է հանգստի ժամանակաշրջան, սակայն ուղեղն անդադար աշխատանքի և լուծման որոնման մեջ է (II փուլ). տեղի է ունենում գաղափարի արտահայտում

կամ, ինչպես անվանում ենք, «ինսայթ»․ այս փուլը հաճախ բնութագրվում է որպես ներշնչում: Գետազոտողները կարծում են, որ փայլատակումը հենց այն պահն է, երբ լուծումը ենթագիտակցությունից անցնում է գիտակցական մակարդակ (III փուլ), և վերջում տեղի է ունենում առաջադրված գաղափարի ճշգրտում և նրա գործնական կիրառության սահմանների որոշում: Սակարող ենք անվանել ներնուծման կամ «վերիֆիկացիայի» փուլ (IV փուլ) (4):

Զորդան Այանը առաջարկում է կրեատիվության զարգացման 10 ստրատեգիաներ: Հիմնական նպատակն է սովորեցնել անձին օգտագործել «4 զունարեկիների» հավաքը՝ պլանավորում, հաստատականություն, համբերություն, կիրք (2):

Կրեատիվության զարգացման բնական միջոց է նաև Խոլոդնայայի առաջարկած **ԿՆՍԻՅ** համակարգի զարգացումը:

Կ – Կոմպետենտություն. սա գիտելիքների կազմակերպումն է, որն ապահովում է արդյունավետ որոշումների ընդունումը գործունեության որոշակի ոլորտում:

Ն – Նախաձեռնություն. նոր ինֆորմացիա փնտրելու և գաղափարներ առաջարկելու ինքնուրույն ցանկություն:

Ս – Ստեղծագործականություն. սուբյեկտիվ նորի ստեղծման գործընթացը:

Ի – Ինքնակարգավորում. սեփական գործունեության կառավարման ունակություն:

Յ – Խելքի կառուցվածքի յուրահատկություն. անհատական–յուրահատուկ ինտելեկտուալ մոտեցման ցուցաբերում: Այս համակարգի զարգացումը բերում է կրեատիվության զարգացմանը և հեշտացնում նորի ստեղծման գործընթացը (5):

Օսթրոմի կողմից առաջարկված «Ուղեղային գրոհի» մեթոդը այժմ լայնորեն կիրառվում է գիտության տարբեր ոլորտներում: Այն իրականացվում է խմբային միջավայրում, և դրա հիմնական դրույթներն են.

- չկան արգելված մտքեր, արտահայտվում են բոլոր ծնվածները,

- չի քննադատվում ոչ մի գաղափար:

«Ուղեղային գրոհը» խմբային կրեատիվ մտածողության գործընթաց է, իսկ ավելի ճիշտ՝ խմբից կարճ ժամանակահատվածում մեծ քանակությամբ մտքեր ստանալու մեթոդ է: Որպես նորմա համարվում է 1,5 ժամում (2 ակադեմիական ժամ) մոտ հարյուր նոր մտքերի զեներացիան: Կրեատիվ խմբի ղեկավար կազմակերպությունում կարող է հանդիսանալ մենեջերներից մեկը:

1. Նախապատրաստում: Խնդրի ընտրություն և նրա մշակում անհատական ռեակտիվ միջոցներով: Օրինակ.

- խնդիր – ինչպես արդյունավետորեն գործել ժամանակակից շուկայում,

- խնդրի մշակում հարցադրումների միջոցով,

- խնդրի լուծման գլխավոր ուղու ընտրություն,

- գիտակցության ոլորտում հայտնված բոլոր մտքերի թեստավորում:

Այսպիսի նախապատրաստական աշխատանքը հնարավորություն է տալիս մենեջերին գնահատել խնդրի էությունը և հետևություններ անել խմբային աշխատանքի հիմնական ուղղությունների վերաբերյալ:

2. Կրեատիվ խմբի կազմավորում: Ուղեղային գրոհի առավելագույն հաջողությունը ապահովված կլինի հետևյալ պայմանների պահպանման ժամանակ.

- խումբը պետք է կազմված լինի մոտավորապես տասը հոգուց,

- մասնակիցների սոցիալական դիրքը պետք է մոտավորապես հավասար լինի,

- խմբում պետք է լինեն խնդրին տեղյակ ընդամենը մի քանի մարդ, որպեսզի ապահովվի երևակայության լայն դաշտ,

- խնդրի քննարկումը պետք է տեղի ունենա հարմարավետ միջավայրում,

- ղեկավարը նախագահում է, նա պետք է ձեռնպահ մնա մասնակիցների վրա ճնշումից:

3. Ուղեղային գրոհի գործընթացը: Այս տեղ առանձնացնում ենք երեք փուլ.

• Ներածական. մոտ 15 րոպե: Վարողը նշում է մեթոդի էությունը, բացատրում է կանոնները և հայտարարում խնդիրը: Խնդիրը գրառվում է գրատախտակին: Վարողը բացատրում է ընտրված թեմայի առաջադրման պատճառը, ապա խնդրում մասնակիցներին առաջադրել խնդրի ձևակերպման իրենց տարբերակները, որոնք նույնպես գրառվում են գրատախտակին:

• Մտքերի գեներացիա: Մասնակիցները ազատորեն արտահայտում են իրենց մտքերը: Երբ տեղի է ունենում դադար, վարողը խնդրում է նայել գրատախտակին և փոքր-ինչ մտածել: Ապա բաժանվում են ենթահարցադրումներով թերթիկներ:

4. Ամփոփում, որը կարող է լինել երկու տիպի.

• «Դասական» տարբերակ. վարողը շնորհակալություն է հայտնում մասնակիցներին և հայտնում, որ առաջադրված մտքերը կտրամադրվեն մասնագետների, որոնք կգնահատեն նրանց առաջադրած մտքերը գործնական կիրառման տեսանկյունից:

• «Չեչտացված» տարբերակ, որի ժամանակ հենց մասնակիցների կողմից էլ կատարվում է մտքերի գնահատումը:

«Ուղեղային գրոհի» կազմակերպմանը կարող են խանգարել ղեկավարության ոչ բավարար հեղինակությունը և մարդկանց ղեկավարման անընդունակությունը (4, 7):

Կոնցեպտուալ քարտեզավորումը մտքերի և գաղափարների ներկայացման և փոխկապակցման մեթոդ է: ԿՔ-ի հիմնարար կանոնները վաթսուհակամյակներին մշակել է պրոֆեսոր Ջոզեֆ Նովակը՝ ելնելով Դեվիդ Օգուբեյի հիմնադրույթից (կոնցեպցիայից): Սակայն հեղինակային իրավունքը վերցրել է Տոմի Բուզանը՝ իր մեթոդն անվանելով Mind Maps, որի հիմքի վրա մշակվել են մի շարք համակարգչային ծրագրեր: Նա այսպես է ներկայացնում մեթոդը. մտային քարտեզը կազմվում է

կենտրոնական բառի կամ կոնցեպցիայի վրա, որի շուրջ տեղադրվում են նրա հետ կապված 5–10 գլխավոր գաղափարները: Այս դուստր բառերից յուրաքանչյուրը նորից շրջապատվում է 5–10 գլխավոր մտքերով: Ստացված գրաֆիկական կառուցվածքը թույլ է տալիս նորովի վերանայել մեր պատկերացումը կենտրոնական կոնցեպցիայի վերաբերյալ, գտնել նոր տպեր այդ կոնցեպցիայի և մեր փորձի միջև: Մեթոդն այժմ օգտագործվում է Mindmap Inspiration Software և Smart Technologies ֆիրմաներում և բավական արդյունավետ է «Ուղեղային գրոհի» ժամանակ: Մտային քարտեզի կառուցումը մեզ թույլ է տալիս.

- հիերարխիկորեն (աստիճանաբար՝ գով) կառուցել մտքերը՝ առաջնություն տրորդային և այլ ճյուղերի օգտագործմամբ,
- հստակ և գունային պատկերներով ընդգծել գաղափարները,
- ցույց տալ նրանց միջև եղած կապերը,
- գնահատել և մեկնաբանել գաղափարները յուրահատուկ խորհրդանշանների (սիմվոլների) միջոցով:

Այն թույլ է տալիս ներկայացնել հիմնադրույթները հստակ, գրավիչ և համոզիչ ձևով, տալ ամբողջական տեսարան՝ նպաստելով մտքերի գեներացիային (7):

Այսպիսով՝ կրեատիվ վարժությունների համակարգերը շատ են և ներկայումս են տարբեր հեղինակավոր կազմակերպությունների և գիտնականների կողմից: Գոյություն ունեն և բավական արդյունավետորեն կիրառվում են նաև այլ երկարաժամկետ թրեյնինգային ծրագրեր՝ առաջարկված դե Բոնոյի, Տորրենսի և այս ուղիտի այլ դասականների կողմից: Նրանց նպատակը մեկն է՝ ուղղորդել անձր ստեղծագործական ներուժի զարգացումը, խթան հանդիսանալ նոր՝ ավելի ստեղծագործական և արդյունավետ լուծումների հայտնաբերման: Ոչ ոք չի կարող չհամաձայնվել, որ նրանք արդյունք չեն տալիս, սակայն ինչ հոււնով է ընթանում անձի

կրեատիվ պոտենցիալի զարգացումը, ինչ ներքին օրինաչափություններ են աշխատում կրեատիվ թրեյնինգների ժամանակ, հաստատապես չենք կարող նշել, քանի որ քիչ են հետազոտությունները այս ոլորտում, համարյա բացակայում են հիմնավոր հայեցակարգերը:

Գաշվի առնելով վերը նշված ընդհանրացումները՝ մենք նախաձեռնեցինք ձևավորող գիտափորձ վերոհիշյալ կրեատիվ տեխնիկաների կիրառմամբ:

Գետազոտության հիմնարար վարկածն էր. կրեատիվ տեխնիկաները ոչ միայն տալիս են խնդրային իրավիճակի արդյունավետ լուծումներ, այլև որոշ ժամանակահատվածում նրանց նպատակաուղղված կիրառումը բերում է անձի կրեատիվ ներուժի զարգացման:

Գետազոտական խմբի հետ կազմակերպեցինք մեկամսյա ձևավորող աշխատանք կոնցեպտուալ քարտեզավորման և «Ուղեղային գրոհի» մեթոդների կիրառմամբ՝ նախապես թեստավորելով .

1. Կրեատիվ ներուժը (պոտենցիալը) (հնարամտություն, միավորման ընդունակություն, ոչ ստանդարտ մտածողություն, ազատ զուգորդումներ (ասոցիացիաներ) ստեղծելու ընդունակություն) ըստ Տորրենսի մեթոդի:

2. Կառուցողական (կոնստրուկտիվ) մտածողության գործակիցը՝ ըստ Էպշտայնի հարցաթերթի:

3. Անձի մտածողական ոճերը:

Ձևավորող աշխատանքից հետո վերոհիշյալ որակները ենթարկվեցին ռեթեստավորման:

Գետազոտության արդյունքում մենք հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Որոշ ժամակակահատվածում կրեատիվ տեխնիկաների (հետազոտության շրջանակներում՝ ուղեղային գրոհ և կոնցեպտուալ քարտեզավորում) շարունակական կիրառումը ստեղծագործական ներուժի և մտածողական ոլորտներում առաջացնում է հետևյալ վերակառուցումները.

- կրեատիվությունը աճում է ազատ ասոցիացիաներ ստեղծելու ընդունակության հաշվին,

- ոչ ստանդարտ մտածողության, հնարամտության և միավորման ընդունակության բաղադրիչներն ավելի կայուն են և դժվար են ենթարկվում զարգացման,

- ավելի հաստատուն են նաև վարքի դեկավարման, կատեգորիկ, սնահավատ և էզոտերիկ մտածողության առանձնահատկությունները,

- աճում է հուզական դեկավարման մակարդակը, որն էլ պայմանավորում է կոնստրուկտիվ մտածողության գործակիցի աճը,

- աշխատանքից հետո աճում է «վերլուծաբան» տիպի արտահայտվածությունը խմբում, որով էլ վերջինս դարձել է կտրուկ գերիշխող մյուս այլ մտածողական տիպի խմբերի հանդեպ:

2. Ձևավորող աշխատանքի ընթացքում հետազոտվողները սովորում են.

- խնդրի լուծման ընթացքում մտքի ընթացքը հանձնել թղթին, կազմել անհատական և խմբային մտային քարտեզներ (տե՛ս նկար 1),

- առաջարկված և ձևակերպված խնդրի շուրջ ծավալել խմբային մտային աշխատանք,

- նկատել միջխնդրային կապերը և դրանք պատկերավոր արտահայտել,

- դուրս գալ ունեցած գիտելիքների համակարգից և նույնիսկ չհիմնավորված, սակայն նոր մտքեր ծնել,

- կենտրոնական խնդրից ծնված հիմնական լուծումների տարբերակումներ կատարել,

- ինքնուրույն զարգացնել ամեն ենթախնդիր, սակայն հարկ եղած պարագայում մեկ ենթախնդրից հղում կատարել մեկ այլ ենթախնդրի,

- գիտակցել և պատկերել մտածողության ուղիղ և հետադարձ հոսքերը:

